ԱՄՓՈՓԻՉ ՏԵՂԵԿԱՆՔ

ՅՈԹԵՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (20.01.2020թ.-18.06.2020թ.)

Յոթերորդ գումարման Ազգային ժողովի չորրորդ նստաշրջանի աշխատանքներն սկսվել են 2020 թվականի հունվարի 20-ին և ավարտվել հունիսի 18-ին: Գումարվել է 8 հերթական, 10 արտահերթ և 4 հատուկ նիստ:

Հաշվետու ժամանակահատվածում Ազգային ժողովն ընդունել է 345 օրենք, որից՝

- 5-ը «մայր» օրենքներ են: Դրանք են՝ «Ծխախոտային արտադրատեսակների եւ դրանց փոխարինիչների օգտագործման հետեւանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման եւ կանխարգելման մասին» և կից օրենքների փաթեթը, «Նյութական պահուստի մասին» և կից օրենքների փաթեթը, «Տիեզերական գործունեության մասին» և կից օրենքների փաթեթը, «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» և կից օրենքների փաթեթը և «Հայաստանի Հանրապետության պետական մրցանակների մասին» և կից օրենքների փաթեթը:

- 314՝ փոփոխություններ և լրացումներ արդեն գործող օրենքներում,

- 26՝ օրենք-համաձայնագրեր:

Այդ ժամանակահատվածի ընդունված օրենքներից 46-ի հեղինակը Ազգային ժողովի պատգամավորներն են, 11-ինը՝ «Լուսավոր Հայաստան» խմբակցությունը, 283-ինը՝ Կառավարությունը, իսկ 5-ինը՝ Կառավարությունը և Ազգային ժողովի պատգամավորները («Ներման մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» օրենք /Կ-414-06.12.2019-ՊԻ/ և «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» օրենքների փաթեթը /Կ-567-15.04.2020,25.05.2020-ՏՏԳԲ/):

Ընդունված օրենքներից 39-ինը գլխադասային է համարվել Առողջապահության եւ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովը, 1-ինը՝ Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովը, 16-ինը՝ Գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովը, 3-ինը՝ Մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովը, 16-ինը՝ Պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովը, 148-ինը՝ Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովը, 10-ինը՝Տարածաշրջանային եւ եվրասիական

ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովը, 49-ինը՝ Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության եւ բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովը, 38-ինը՝ Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը, 25-ինը՝ Ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովը:

Հաշվետու ժամանակահատվածում Ազգային ժողովը՝

- ընտրել է Կենտրոնական բանկի նախագահ և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի մեկ անդամ,
- լսել և ի գիտություն է ընդունել Հայաստանի Հանրապետության Կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65-Ա որոշմամբ հավանության արժանացած՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի 2019 թվականի կատարման ընթացքի եւ արդյունքների մասին զեկույցը, «2019 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանության վիճակի մասին» տարեկան հաղորդումը եւ «Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2019 թվականի գործունեության վերաբերյալ» տարեկան զեկույցը, «Հայաստանի Հանրապետության դատախազության 2019 թվականի գործունեության մասին» հաղորդումը և Հեռուստատեսության

եւ ռադիոյի հանձնաժողովի 2019 թվականի գործունեության մասին տարեկան հաղորդումը: